

## Լույսի որդիները

2006-ի մարտին էր՝ «Հայկական Ժամանակից» ստացա Տիգրան Հայրապետյանի անվան մրցանակը: Այն ժամանակ դեռ չգիտեի, որ սա իմ կյանքի կարեւորագույն բեկումնային փուլերից պետք է դառնա՝ ե՛ւ արտաքին, ե՛ւ ներքին հանգամանքների առումով: Այդ պահից անցել է ուղիղ երեք տարի, Տիգրանի մահվանից՝ 10, իսկ նրա ծննդյան օրվանից՝ 45 տարի, ես հասել եմ այն տարիքի շեմին, երբ Տիգրանը մահացավ, նրա անվան մրցանակը ինձ տվող Նիկոլը անցել է ընդհատակ, իսկ իմ քեռու տղան բաժանել է իր ունեցած-չունեցածը, որպեսզի ընդմիջտ հեռանա Հնդկաստան: Մնացել եմ միայն ես՝ իմ համակարգչի առջեւ, որը իմ ե՛ւ դաշնամուրն է, ե՛ւ ատրճանակը, իսկ մեկ-մեկ՝ նաեւ իմ գնդացիոր: Գուցե մի իմաստ կա՞, որ մնացել եմ՝ ստեղնաշարի եւ մկնիկի քաղքենիացող ասպետս, օրեցօր մարդ-մեքենայի վերածվող, կես չափով համակարգիչ դարձող կենտավրոսս, Երեւանյան չկայացած պարտիզանս: «Իսկ եթե կամ, ուրեմն պարտավոր եմ ռազմաճակատի իմ հատվածը պաշտպանել այնպես, ինչպես նրանք պաշտպանեցին իրենցը»:

Ես Տիգրանին չեմ ճանաչել, երբ նա դեռ կենդանի էր: Չնայած լսել էի նրա մասին, բայց մինչեւ նրա անվան մրցանակը ստանալը նրանից ոչ մի տող չէի կարդացել: Մրցանակը ստանալուց հետո նվեր ստացա նաեւ Տիգրանի հողվածների ժողովածուներից առաջինը, այսինքն՝ անկախության տեսական եւ գործնական քաղաքականության դասագրքերիցս մեկը: Տիգրանին չեմ ճանաչել, բայց հանդգնում եմ համարել իրեն ավագ ընկերս, քանի որ մեր շփումը ժամանակ առ ժամանակ շատ ինտենսիվ է դառնում՝ շնորհիվ իր գրածների ընթերցանության: «Ի՞նչ է նշանակում պատկանել քաղաքակրթությանը: Դա նախ եւ առաջ սեփական միտք ստեղծելու ունակությունն է»: Անկախ միտքը ո՞րն է: Հայաստանում վերլուծության, քաղաքագիտության եւ այլնի անվան տակ արտադրվող ապրանքի 80-90 տոկոսը կամ անմեղսունակություն է, կամ՝ օտար շահերի գիտակցված ու չգիտակցված սպասարկում: Անմեղսունակները երկար են ապրում, օտար գործակալները՝ մի քիչ ավելի կարճ, իսկ անկախ մտքի եւ անկախ գործի «արտադրությունը» կազմակերպել փորձողները, պաշտպանված չլինելով Տիգրանի մահից մի քանի ամիս անց ԳՌՈՒ-ի կողմից գնդակահարված (ինչը Տիգրանը գրեթե բառացի կանխատեսում էր, որով եւ իրավունք ուներ իրեն «ամենատես» կոչելու) Հայաստանի Հանրապետության կողմից, նմանվում են որսի ելած միայնակ գայլերի. մեղքն իրենց վիզը՝ եթե հաջողվեց՝ 35-ի շեմը կհաղթահարեն ու կկերտեն անկախ Հայաստանի անկախ անվտանգության համակարգը, որի հիմքում ընկած է անկախ միտքը: Կանեն դա Տիգրանի հետ միասին՝ նրա գրքերը մատիտով նկարագարողելով ու էջերը մաշելով:

Սա եմ համարում իմ, իմ ընկերների՝ «մնացածներիս» ռազմաճակատը, քանի որ եթե Աստված մեզ թողել է, որ այս տարիքում մնանք մեր տանը՝ մեր աշխատանքային

գործիքների հետ միասին, հարմար պայմաններում, ուրեմն մենք պետք է վերադարձենք աշխարհին նրա պարզեւածը՝ տոկոսներով: Ոչ մի օր՝ առանց «նոր ձուլված փամփուշտի»՝ միտք-փամփուշտի, նշանառու կրակոցի՝ դեպի Հայաստանի անկախության ոստիները՝ «երեւելի ու աներեւոյթ»: Եւ ոչ մի հանդուրժողականություն նրանց նկատմամբ, ինչպես որ Տիգրանի մոտ դա չկա: Նկատի ունեմ ոչ թե իրական՝ աստվածային հանդուրժողականությունը, այլ այն սուտոգատը, որը աշխարհի տերերը հրամցնում են իրենց ստրուկներին, որպեսզի լավ, բարի ու պուպուշ ստրուկներ լինեն:

Տիգրանը իսկական քրիստոնյա էր: Ոչ թե քրիստոնեական արժեքներից բարբաջող նորադարձ «բարեպաշտ», այլ Ավետարանի դրույթները քրքրող, խորքից հասկանալ փորձող՝ թեկուզ եւ դրանց հետ ներքուստ վիճելու միջոցով (առանց վիճելու՝ ի՞նչ խորքով հասկանալ), մեկը: Իսկ իսկական քրիստոնյան, ըստ Պողոս առաքյալի, պիտի լինի «ինչպես լույսի որդի»: Լույսի որդիներ՝ ուրախ, պարզ ու անսքող, ինչպես իրերը լույսի տակ, բայց նաեւ՝ հատու ու կուրացնող, ինչպես լույսի ճառագայթը՝ խավարասերների նկատմամբ: Աստված ողորմի Տիգրանի արեւային հոգին...

Հրանտ Տեր-Աբրահամյան

26.06.2010

Սկզբնաղբյուրը՝ [armtimes.com](http://armtimes.com)